



Հակոբ Պարոնյան

Ազգային շոջեր

ՅԱԿՈԲ ՎԱՐԴՈՎԵԱՆ

Հակոբ Վարդովեան, դերասան-տնօրէն Վարդովեան խումբին, ծնաւ ի Պեշիկթաշ 1830 օգոստոս 18-ին: Մօրն արգանդէն դերասանական անանկ ձեռով մը դուրս նետուեցաւ, որ կարծես քուլիսէն տեսարան կու գար, անանկ սաստկութեամբ դուրս յարձակեցաւ, որ քիչ մնաց դայեակին քիթը պիտի կոտրէր: Ներկայ գտնուողներն դայեակին սիրտն առին եւ երբ ստակը տալով ճամբելու վրայ էին, Վարդովեան մէջերնին նետուեցաւ եւ ըսաւ, թէ ըստ կանոնագրութեան ստակին կէսը ամսոյն 15-ին տան, կէսն ալ ամսոյն վերջը: 1846-ին դպրոց դրկուեցաւ, որպէսզի մտաւորական սնունդ առնէ, բայց անիկա ատանկ սնունդներու կարեւորութիւն չտալով, դասարանին մէջ տղայոց շարժումներն ու ձեւերն նկատողութեան կ'առնէր: Բնաւ դաս չէր սորվեր, դասախօսութեան միջոցին ընկերը քովէն կամացուկ մը կ'ըսէր իրեն, եւ ասանկով դասերն աղէկ սորված կ'ըլլար: Այս գիտը շատ օգտակար եղաւ իրեն, այնպէս որ այսօր իր մասը չսորվի ալ նէ՝ յուշարարէն շատ դիւրութեամբ կրնայ առնել: Իրիկունները տուն դառնալուն պէս՝ թաղին պզտիկ տղաքները կը ժողվէր եւ սենեակին մէկ կողմը վարագոյր մը քաշելով խեյալ կը խաղցունէր, քարաքեօզին սիրահարի մաս կու տար, հաճի էյվատին ալ ազնուական հօր մասը կը յանձնէր եւ ինքն ալ վարագուրին ետեւը պահուրտած գանոնք կը խաղցնէր: 1848-ին դպրոցէն ելնելով՝ ըստ ոմանց նկարչութեան արուեստ եւ ըստ ոմանց սրւաճիութիւն սորվելու գնաց կ'ըստի. բայց որովհետեւ իր ասպարէզը ան չէր, անկից ելաւ եւ դերասանութեան արուեստին ետեւէն եղաւ: Արեւելեան թատրոնը չբացուած՝ քանի մը ընկերներու հետ մէկ-երկու ներկայացումներ տուաւ, վերջէն

Արեւելեան թատրոնը մտաւ, ելաւ, նորէն մտաւ, դարձեալ ելաւ, վերստին մտաւ: Դերասանական կեանքն ու արուեստն այնչափ սիրեց, որ բոլոր բարեկամներն կը ստիպէր, որ դերասան ըլլան ու ազգին գեղծումներն հարուածեն: 1866-ին Նաումի թատրոնի մէջ ներկայացուց Մաքպեթը ու կրից բոբբոքման ժամանակն անանկ կանոնաւոր քայլեր առաւ, որ քովը աղջիկ մը ըլլար նէ՝ աղուոր սոթիշ մը կ'ըլլար: 1870-ին Թափառական հրէային մէջ Ռոտէնի մասը կատարեց ամենայն յաջողակութեամբ. ուրիշ շատ դերեր ալ խաղաց, բայց խաբելու, կեղծաւորութիւն ընելու մասերուն մէջ երեւելի հանդիսացաւ: Դերասանական խումբն՝ որուն մէջ կը գտնուէր ինքն, քանի մը անգամ ներկայացումներն դադարեցնելով՝ երբ յուսահատութեան մէջ ինկած էր, Վարդովեան՝ ես թէ՛ թատրոնն եւ թէ՛ դերասաններն կարող եմ ապրեցնել ըսելով՝ դերասաններն ժողվեց իւր տնօրէնութեան տակ ու անոնցմէ խումբ մը կ'ազմեց: Ճշմարտութիւնը խօսելով՝ Վարդովեանի անխոնջ եւ անվիատ աշխատութեան շնորհիւն է, որ ազգն այսօր թատրոն մը ունի: Խումբ կ'ազմելուն պէս՝ թարգմանիչներ բռնեց եւ օտար խաղերով սկսաւ ազգին գեղծումներն հարուածել, ճիշտ այն մարդուն պէս, որ ապտակն օտարին գլխուն իջեցնելով՝ տղան ծեծած ըլլալ կը կարծէ: Այդ ընթացքը մինչեւ այսօր փոխած չէ, եւ իւր զբաղմանցը պատճառաւ ասկից վերջն ալ փոխելու ժամանակ չափաւ ունենայ: Թատրոնը շարունակելու փափաքով փիղի չափ թերութիւններն իրեն ճանճի պէս կ'երեւան, եւ թէ թատրոնին թերութիւններն մէկն իրեն ցոյց տայ՝ զանոնք ուղղելու հոգատար չէ, եւ կարծես լռելեայն կ'ըսէ. վերցուր այդ մոլորութիւններն թատրոնի մէջէն եւ ահա թատրոնն ալ կը վերնայ: Ներքին կանոնադրութեան մը համեմատ դերասաններէն քիչ շատ տուգանք առնելով՝ եւ ու մուտքը կը հաւասարակշռէ. որոշեալ ժամէն քառորդ մը ետքը եկող դերասանը կը տուժէ. քառորդ մը առաջ եկողն ալ կը տուժէ. դեր կատարած միջոցին հազացող դերասանին ալ ամսականէն քիչ մը բան կը կտրուի: Դերասաններն կառավարելու մէջ այնքան սիրտ հալեցուցած է ու դեռ կը մաշեցունէ, որ քովը երթալուդ պէս մագերը փեթտելով կու լայ, ու, ալ լմնցայ, ալ չեմ կարող ապրիլ, բայց թատրոնը երեսի վրայ չձգելու համար ակռաներս սխմած եմ, կ'ըսէ: Չափազանց կասկածոտ է, երկու հոգի խօսակցութեան մէջ տեսնելուն պէս՝ իր չճանչցած մարդիկ ալ ըլլան նէ՝ մէջքը ծռելով՝ ձեռքերը շփելով քովերնին կ'երթայ, ու «Աղբարներս, թատրոնն իմս չէ, ազգինն է, ինչո՞ւ կ'աշխատիք զայն կործանել», կ'ըսէ: Ասոնց հետ մէկտեղ այսօրուան օրս իրեն արժանաւայել հանգստութեամբ կեանք կ'անցունէ, ոտքով չքալեր, միշտ կառքով

կ'երթայ կու գայ. թէ որ տունը երթաս՝ եւ քիչ մը անդիի սենեակը երթանք ըսես՝ սրկէ կառք մը ապսպրեցէք կ' ըսէ: Ջրոյց կը պտտի, որ մօտերս ՀԱՅԿ պիտի խաղայ եղեր կառքի մը մէջ նստած: Վեհանձնութիւնը կը սիրէ, բայց չգործածեր, որովհետեւ կը դաշի իրեն. ինչպէս որ շատերն օդին կը սիրեն ու չեն կրնար գործածել: Իր թատրոնին մէջ այսօր 100-ի մօտ ընտանիք կ'ապրին. հաւանական է, որ թատրոնն իբր գատ թաղ նկատուելով՝ պատրիարքարանէն հրահանգ դրկուի, որ թաղական խորհուրդ մը ընտրեն անոնց օրհնութիւնները կ'առնէ, ուրիշներէն առած անէծքներուն դիմացը գրելով՝ վերջին դատաստանին ներկայացուելիք հաշիւներն ալ հիմակւրնէ կը հաւասարակշռէ:

Վարդովեան Էֆենտին հասակով բարձր, կազմով միջին, գոյնով դեղին, դէմքով երկար, մօրուքով կարճ, ուղեղով փոքր մարդ մ'է: Դէմքին չարութիւն մը չերեւար, բարութիւն ալ չգուշակուիր, վերջապէս մարդ է, պարագաներուն համեմատ բարի կամ չար: Աստուած չար պարագաներէն ազատ պահեսցէ:

Վարդովեան Էֆենտին ամէն բանէն կ'ուզէ իրեն շահ հանել. եթէ իրեն «բարի լոյս» ըսես՝ ասիկա շատ աղուոր նիւթ մ'է, ասիկա կատակերգութիւն մը շինէ տէ՛ խաղանք, կ'ըսէ: